ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023-2024 ուսումնական տարվանից սկսած՝ որպես Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն՝ ձեռնամուխ եմ եղել դպրոցում հանրակրթության պետական չափորոշչի ներդրմանն ուղղված աշխատանքներին՝ դրա համար մշակելով հստակ աշխատակարգ, համապատասխան որի աշխատանքները բաժանվել են հետևյալ ուղղություններով՝ ուսումնական պլանի կազմում, ժամաբաժանում, դասացուցակի կազմում, նախագծային աշխատանքների, արտադասարանական խմբակների, երկարօրյա խմբերի աշխատանքների կանոնակարգում, խորհրդատվությունների իրականացում:

Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցը մենթոր դպրոց է, և տարածաշրջանի դպրոցների ուսումնական գծով փոխտնօրենները հաճախ են դիմում խորհրդատվությունների նպատակով, և այդ ուղղությամբ իմ կողմից դպրոցում հաճախակի կազմակերպվում են խորհրդատվական հանդիպումներ, ինչպես նաև սոցիալական ցանցում ստեղծված խմբի («Փոխտնօրենների խորհուրդ») միջոցով կիսվում եմ իմ տեղեկատվությամբ:

Հաշվի առնելով հանրակրթության պետական չափորոշչի նոր պահանջները՝ կազմվել է դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանը, և այն ուղարկվել է ԿԶՆԱԿ հիմնադրամ՝ կարծիքի ստացման նպատակով: Որպես եզրակացություն նշվել է, որ «ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի Յու. Բախշյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանը սահմանված կարգով կարող է գործածության մեջ դրվել ուսումնական հաստատությունում: Դրական եզրակացություն ստանալուց հետո Գորիսի տարածաշրջանի դպրոցների փոխտնօրենների հետ համագործակցության արդյունքնում հավաքվել ենք դպրոցում, քննարկել ենք ուսումնական պլանները, իսկ ես իրենց եմ փոխանցել իմ փորձը:

Ժամաբաժանման և դասացուցակի կազմման համար հիմք է հանդիսացել ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից դրական եզրակացություն ստացած ուսումնական պլանը:

2023-2024 ուսումնական տարում դպրոցում պետք է իրականացվի 17 նախագծային աշխատանք, որից 8-ն իրականացվել է 1-ին կիսամյակի ընթացքում, իսկ 9-ը պետք է իրականացվի 2-րդ կիսամյակի ընթացքում: Մասնագիտությամբ ծրագրավորող եմ, դպրոցի համար ստեղծել եմ կայք, որտեղ իմ կողմից նախագծային աշխատանքների համար ստեղծվել է «Նախագծային աշխատանք» առանձին բաժինը, և սահմանված կարգով հրապարակվել են իրականացված նախագծային աշխատանքների տվյալները, պրոդուկտները: Հղումը՝ http://goris3school.am/publ/5: Նախագծային աշխատանքի համար իմ կողմից մշակվել է ամփոփաթերթ, որը հնարավորություն է տալիս համոզվել, որ բոլոր աշակերտներն ընդգրկված են որևէ աշխատանքի մեջ, ովքեր են ղեկավարները, քանի դասաժամ է հատկացված, շաբաթվա որ օրերին են հանդիպումները: Նախագծային աշխատանքի իրականացման կարգի համաձայն, ինչպես նաև պատշաճ իրականացման համար իմ կողմից մշակվել են նախագծային աշխատանքի պլան, թեմատիկ պլան, մատյան և հաշվետվության ձևանմուշ, որոնք կիրառվում են մեր դպրոցում, ինչպես նաև փոխանցվել են գործընկեր դպրոցներին՝ կիրառության նպատակով: Հիմք ընդունելով նախագծային աշխատանքի իրականացման կարգն ու ԿԶՆԱԿ-ի ցուցումները, իմ կողմից մշակվել է նախագծային աշխատանքի գնահատման կարգ, որտեղ հստակ սահմանված են նախագծային աշխատանքի բովանդակությանը, կառուցվածքին, ձևավորմանը, կատարման կարգին, պաշտպանությանը, գնահատմանը, հաշվառմանն ու պահպանմանը վերաբերող դրույթներ:

Իմ մասնակցությունն ունեմ նաև դպրոցում արտադասարանական խմբակների, երկարօրյա խմբերի աշխատանքների կանոնակարգման գործընթացում: Իմ նախաձեռնությամբ մեր դպրոցում արտադասարանական խմբակների ծրագրերը պարտադիր են 2021-2022 ուսումնական տարվանից, դրանց համար սահմանված է հստակ ձևանմուշ: Ծրագրերում հստակ արտահայտված են խմբակի նպատակները, վերջնարդյունքները, ժամաբաժանումը, թեմատիկ պլանավորումը, ինչը պահանջում է 2022-2023 ուսումնական տարվանից կիրառվող արտադասարանական խմբակների ձևավորման կարգը: 2022-2023 ուսումնական տարում նույն ձևանմուշով կազմված ծրագրերն ուղարկվել են ԿԶՆԱԿ հիմնադրամ՝ երաշխավորություն ստանալու նպատակով, և դրանց գերակշիռ մասը երաշխավորվել է գործածության: Դպրոցի արտադասարանական խմբակների երաշխավորված բոլոր ծրագրերը հասանելի են կայքում: Հղումը՝ http://goris3school.am/index/0-190:

2023 թվականի սեպտեմբերի 4-ին №113-Ն որոշման համաձայն՝ երկարօրյա խմբերի աշխատանքները պատշաճ կատարելու համար իմ կողմից մշակվել են ձևաթղթեր, որտեղ նշվում են ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով ընդգրկված աշակերտների տվյալները, առարկաները, ուսումնառության ցածր արդյունք գրանցած թեմաները, ուսումնառությունը բարելավելուն ուղղված աշխատանքները, ինչպես նաև կանխատեսվող ժամաքանակը: Երկարօրյայի ուսուցիչներն աշխատանքը կազմակերպում են այդ նպատակով մշակված երկարօրյայի թեմատիկ պլանի քայլերին համապատասխան, իսկ աշխատանքներն ավարտելուց հետո ներկայացնում են հաշվետվություն, որը նույնպես մշակվել է իմ կողմից, և դրա մեջ անդրադարձ է կատարվում արդյունքներին՝ ըստ սահմանված չափանիշների:

Դպրոցում ուսումնական գործընթացքում կիրառվող փաստաթղթերը մշակվում և կիրառվում են բացառապես էլեկտրոնային տարբերակով: Այդ գործիքակազմի գերակշիռ մասը նույնպես մշակվել է իմ կողմից: Մշակվել է կարողությունների ձևավորմանը միտված ուսումնառության գործընթացի կազմակերպման համար պահանջվող հիմնական աշխատանքային փաստաթղթերից մեկը՝ օրվա դասի պլանը, որն իր մեջ ներառում է նոր

հանրակրթության պետական չափորոշչով աշխատելու հիմնական պահանջները՝ դասի թեման, նպատակը, վերջնարդյունքը (այդ թվում՝ ՀՊՉ հանրակրթական տարրական, հիմնական, միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքը), ուսումնառության գործընթացի կազմակերպման քայլաշարը, կիրառվող մեթոդաբանությունը, ռեսուրսները, խաչվող հասկացությունները, կարողունակությունները, ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքների համար առանձնացված հատված, ինչպես նաև մի շարք այլ մասեր, որոնք լրացնում է ուսուցիչը: Օրվա դասի պլանն իմ առաջարկությամբ, մանկավարժական խորհրդի հաստատմամբ պարտադիր գործիքակազմ է մեր դպրոցում:

Դպրոցում իմ կողմից մշակված և էլեկտրոնային տարբերակով կիրառվող գործիքակազմից է նաև օրացուցային-թեմատիկ պլանը, որը միտված է հեշտացնելու ուսուցիչների մատենավարությունը և օգնելու, որպեսզի ուսուցիչն ուսումնական գործընթացը կազմակերպի ըստ այդ պլանի և թեմատիկ հաջորդականությամբ, առանց մտավախություն ունենալու, որ որևէ թեմայից կարող է «հետ ընկնել»: Օրացուցային-թեմատիկ պլանը կազմվել է՝ հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի լրացման (գործածման) կարգի պահանջները:

Իմ կողմից մշակվել և դպրոցում կիրառվում են դիտարկումների թերթիկները, որոնք նախատեսված են դասվարների, դասղեկների համար՝ իրականացնելու դիտարկումներ իրենց դասղեկական դասարաններում, ինչպես նաև ուսուցչի և ուսուցչի օգնականների աշխատանքները համակարգված և պատշաճ կազմակերպելու համար: Ուսուցիչն ու ուսուցչի օգնականը դիտարկումներ են իրականացնում դասարաններում և եթե արձանագրվում են ուսումնառության ցածր արդյունք գրանցած կամ դասապրոցեսում ցածր ներգրավվածություն ունեցող աշակերտներ, ուսուցիչը տվյալ թեմաներից նրանց համար սահմանում է նպատակ, վերջնարդյունք, իսկ ուսուցչի օգնականն աշխատում է աշակերտների հետ՝ նպատակին, վերջնարդյունքին հասնելու նպատակով:

2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության նպատակով իմ կողմից պարբերաբար իրականացվում են դիտարկումներ, որոնց իրականացման սկզբունքները քննարկվել են դպրոցի մեթոդական միավորումներում: Արդյունքները քննարկվում են մեթոդմիավորման նիստերի, խորհրդակցությունների ընթացքում: Մեթոդական միավորումների նիստերն արձանագրվում են իմ կողմից մշակված ձևաթղթում, որտեղ նշվում են նիստին մասնակիցների թիվը, օրակարգային հարցերը, զեկուցողները, արտահայտվողները և որոշումները: Դրանց կցվում են նաև այն առդիրները, որոնք քննարկվել են նիստի ընթացքում:

Դպրոցում դասալսումներն իրականացվում են մեթոդական միավորումներում, մանկավարժական խորհրդում հաստատված սկզբունքների հիման վրա և արձանագրվում են այդ նպատակով մշակված ձևաթղթում, որում հստակ սահմանված են բնութագրիչներ և ընդլայնված կարծիքի համար նախատեսված հատվածներ: Դասալսումների արդյունքները պարտադիր քննարկվում են դասալսողի, դասալսվողի ներկայությամբ, իսկ արդյունքներն ամփոփվում են մեթոդական միավորումների կիսամյակային ամփոփիչ և տարեվերջյան նիստերում:

Իմ կողմից մշակվել և դպրոցում շրջանառվում են թեմատիկ գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների համար նախատեսված ձևաթղթեր, որոնցում նշված է դպրոցի անվանումը, դասարանը, առարկան, կիսամյակը և մի շարք այլ տվյալներ: Դրանցում պարտադիր պահանջ է, որ աշակերտները հստակ իմանան, թե յուրաքանչյուր հարցին պատասխանելու դեպքում քանի միավոր են վաստակելու: Բոլոր թեմատիկ գրավոր աշխատանքները և գործնական աշխատանքներն ուսումնական տարվա մեկնարկին քննարկվում են համապատասխան ցիկլային հանձնաժողովներում, որից հետո շրջանառվում: Նույն սկզբունքով են իրականացվում նաև հայտորոշիչ և ձևավորող գնահատումը, եթե դրանց նախատեսված են գրավոր, թեստային տարբերակներով: Նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների համար մշակվում են հայտորոշիչ և ձևավորող գնահատման ձևաթղթեր, չափանիշներ:

Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում 1 անգամ 2-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաներից տրվում են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ, որոնց համար նախատեսված հարցաթերթերը մշակված և համապատասխանեցված են գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների սկզբունքներին: Աշխատանքները տրվում են կոդավորված եղանակով, ինչը նպաստում է արդյունքների իրական պատկերի դուրսբերմանը, տվյալ առարկաներից դասարանների որակի, առաջադիմության և միջին որակական գնահատականի արձանագրմանը: Կոդավորված տարբերակով աշխատանքները բացառում են ուսուցիչների կողմից կողմնակալ վերաբերմունքի դրսևորումը, ինչն էլ հնարավորություն է տալիս արձանագրել իրականին մոտ արդյունքներ:

Ուսումնական տարվա ընթացքում 1 անգամ, հիմնականում երկրորդ կիսամյակի ընթացքում 2-9-րդ դասարաններում տրվում են մնացորդային գիտելիքների ստուգման գրավոր աշխատանքներ՝ թեստային աշխատանքների միջոցով՝ «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաներից: Թեստերը կազմվում են նախորդ տարիների անցած նյութից. 2-րդ դասարաններում՝ 1-ին կիսամյակի նյութից, 3 դասարաններում՝ 2-րդ դասարանի նյութից, 4-րդ դասարաններում՝ 2-3-րդ դասարանների նյութից, 5-րդ դասարաններում՝ 3-4-րդ դասարանների նյութից, 6 դասարաններում՝ 4-5-րդ դասարանների նյութից, 7-րդ դասարաններում՝ 5-6-րդ դասարանների նյութից, 8-րդ դասարաններում՝ 6-7-րդ դասարանների նյութից, 9-րդ դասարաններում՝ 7-8-րդ դասարանների նյութից: Աշխատանքները տրվում են կոդավորված եղանակով, ինչը բացառում է ուսուցիչների կողմից կողմնակալ վերաբերմունքի դրսևորումը, հնարավորություն է տալիս արձանագրել իրականին մոտ արդյունքներ և ստանալ տվյալ առարկաներից դասարանների որակի, առաջադիմության և միջին որակական գնահատականի ճշգրիտ պատկերը:

Ե՛վ տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների, և՛ մնացորդային գիտելիքների ստուգման գրավոր աշխատանքների արդյունքներն ամփոփվում են ու ներկայացվում մեթոդական միավորման և մանկավարժական

խորհրդի նիստերում և դրանց արդյունքներով մշակվում են հստակ քայլեր՝ կրթության որակի, առաջադիմության ու միջին որակական գնահատականների բարելավման ուղղությամբ:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իմ կողմից մշակված ամփոփագրերով ամփոփվում են կիսամյակներն ու ուսումնական տարին: Ամփոփագրերի մեջ արտացոլվում են ըստ առարկաների, ըստ աշակերտների միջին որակական գնահատականները, դասարանի որակը, առաջադիմությունը և հաշվի առնելով այդ ցուցանիշները՝ մշակվում են քայլեր՝ արդյունքների լավարկման նպատակով:

Դպրոցի ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժը, հոգեբանը ուսումնական տարվա ավարտին ներկայացնում են հաշվետվություններ՝ իրենց գործունեության վերաբերյալ, որոնց ձևանմուշները, պահանջները նույնպես մշակվել են իմ կողմից:

Իմ կողմից մշակվել են դպրոցի ներքին շահակիցների բավարարվածության հարցման, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ աշակերտների հարցման, ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգեր, որոնց նպատակն է վեր հանել նշված ուղղություններով առկա խնդիրները և մշակել հստակ քայլեր և մեխանիզմներ՝ դպրոցում կրթության որակի բարձրացման, շահակիցների բավարարվածության ուղղությամբ:

Առաջիկայում իմ համահեղինակությամբ լույս է տեսնելու մեթոդական ուղեցույց, որը նպատակ ունի մշակել, հավաքագրել, ուսումնասիրել հանրակրթական ուսումնական հաստատություններում գոյություն ունեցող առաջավոր փորձը և տարածել այն, ուսումնասիրել մանկավարժության նոր զարգացումները և տարածել դրանք, ինչպես նաև ուսուցիչների համար ապահովել մեթոդական օժանդակություն, ինչն իր հերթին կնպաստի առարկայի դասավանդման որակի բարձրացմանը: Մեթոդական ուղեցույցում ներկայացված կլինեն իմ կողմից մշակված, ինչպես նաև որպես համահեղինակ՝ մշակված հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության կազմակերպման օրինակելի փաստաթղթեր, նոր ՀՊՉ-ի և առարկայական չափորոշիչների, ծրագրերի հիման վրա ստեղծված օրացուցային-թեմատիկ պլաններ (ՕԹՊ), օրվա դասի պլաններ (ՕԴՊ), առարկայական թեմատիկ գրավոր աշխատանքներ (ԹԳԱ), նախագծային աշխատանքի թեմատիկ պլաններ (ՆԹՊ), առարկայական նախագծային աշխատանքի թեմաներ, խմբակների հաստատված ծրագրեր, առարկայի դրվածքի ուսումնասիրության ալգորիթմներ, առարկայական մեթոդմիավորումների նիստերի արձանագրություններ, դասղեկի և ուսուցչի հաշվետվություններ:

Որպես ուսումնական գծով փոխտնօրեն՝ խորհրդատվություններ ստանալու նպատակով մշտապես կապի մեջ եմ ԿԶՆԱԿ հիմնադրամի համապատասխան աշխատակիցների հետ: Առաջացած հարցերի դեպքում համապատասխան խորհրդատվություններ ստանալուց հետո տեղեկատվությունը փոխանցում եմ նաև տարածաշրջանի դպրոցների ուսումնական գծով փոխտնօրեններին: Այդ խորհրդատվությունների ընթացքում հանդես եմ եկել առաջարկությամբ, որը կապված է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի անհամապատասխանության հետ, ինչը կապված է երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի հետ, ինչպես նաև պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 4-րդ գլխի 24-րդ կետի «դասի» բառի հեռացման հետ, որը շփոթություն է առաջացնում՝ գնահատման համակարգի նոր սկզբունքների հետ կապված:

Իմ և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի, Գորիսի պետական համալսարանի Ընդհանուր մանկավարժության և հատուկ կրթության ամբիոնի դասախոս Հերմինե Ալավերդյանի կողմից դպրոցում կազմակերպվել է «Գնահատում, կարողունակություններ, վերջնարդյունքներ, աշակերտների ներգրավվածություն, փաստաթղթավարություն» թեմայով դասընթաց, որին մասնակցել են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները: Դասընթացի մասին ամբողջական ինֆորմացիան հասանելի է կայքում՝ http://goris3school.am/publ/2-1-0-722 :

2021 թվականին իմ կողմից Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի համար ստեղծվել է կայք, որը սպասարկվում է իմ կողմից: Կայքում առանձնացված են որակյալ, ինչպես նաև օրենքներին ու կարգերին համապատասխան կրթության կազմակերպման համար բոլոր պայմանները: Կայքն ունի «Փաստաթղթեր», «Օրենքներ, կարգեր», «Թղթերի ձևանմուշներ», «Չափորոշիչներ և ծրագրեր», «Միջնակարգ կրթության օրենսդրություն» և մի շարք այլ բաժիններ, որտեղ հավաքված է արդիական ու անընդհատ թարմացվող ինֆորմացիա, որն օգնում է և՛ մեր դպրոցի, և՛ այլ դպրոցների աշխատակիցներին կրթությունը կազմակերպել բոլոր պահանջներին և սկզբունքներին համապատասխան և հաստատություններում ունենալ համակարգված աշխատանք:

Դպրոցի շահակիցների համար կայքում հասանելի են նաև դասացուցակները, աշխատակազմի մասին ինֆորմացիա, հաշվետվությունները, ներքին գնահատումները: Հղումը՝ http://goris3school.am/ :

Դպրոցը «Ֆեյսբուք» սոցիալական կայքում ունի պաշտոնական էջ, որը վարվում է իմ կողմից, և որտեղ թափանցիկ կերպով ներկայացվում է դպրոցի գործունեությունը: Հղումը՝ https://www.facebook.com/YuriBakhshyanSchool

Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի
ուսումնական գծով փոխտնօրեն՝
Սերգեյ Ավանեսյան